

ՀԱՌՈՐԴՈՒՄՆԵՐ * СООБЩЕНИЯ

Աշխարհագրություն

УДК 551.4

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԵԼԱՎՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՅԹ

Պ. Գ. ԴԱՎԹՅԱՆ*, Հ. Ա. ԿՈՍԱՆՅԱՆ

ԵՊՀ ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութարանության ամբիոն, Հայաստան

Բանալի բառեր. սելավային վտանգ, պինդ փուլ, ջրահավաք ավազան, սելավի կանխատեսում:

Ներածություն: Սելավները լեռնային գետերի հովիտներում առաջացող հանկարծահաս, կարճաժամկետ (1–3 ₋) ցեխային կամ ցեխաքարային հոսքեր են, որոնց բնորոշ են ալիքածն շարժումը և պարբերականության բացակայությունը [1]: Դրանք աղետաբեր երևոյթներ են, որոնք ոչ միայն մեծ վնասներ են հասցնում տնտեսությանը, այլ նաև պատճառ են դառնում մարդկային զոհերի:

Սելավների հանկարծահասությունը կայանում է նրանում, որ, եթե ջրհավաք ավազանի ուսումնասիրմանը կարելի է պարզել կուտակված բեկորային հյուրի քանակությունը, ապա կյանքի տեղատարափ և մեծ ինտենսիվության անձրևներ, որոնք կարող են ձևավորել մակերևութային հոսք և ընդգրգել կուտակված բեկորային նյութ անկանխատեսելի է [2]:

Սելավների կանխատեսման հիմնախնդիրների անվտանգությունն ապահովելու նպատակով զարգացած երկրների մեծ մասն անցում է կատարում անվտանգության ապահովման նոր ռազմավարության, որը հիմնված է աղետաբեր բնական երևոյթների կանխատեսման և կանխման սկզբունքների վրա: Այս ռազմավարության մեջ կարելոր նշանակություն ունի ոխսկի աշխարհագրությունը [3]:

Ըստ ՍԱԿ-ի կողմից ընդունված մեկնարանության՝ բնական ոխսկը սպասվող վնասներն են, որոնք պայմանավորված են որոշակի ժամանակահատվածում տվյալ տարածքում բնական վտանգավորության դրսերմանը: Ոխսկի հաշվարկը տրվում է վտանգավորության ապահովածությանը (հավանականությանը) և դրանից սպասվող վնասի հիմնան վրա՝

$$R=PU,$$

որտեղ R -ը ոխսկի մեծությունն է, P -ն բնական վտանգավորության ապահովածությունը, U -ն բնական վտանգավորությունից կրած վնասի չափը:

Հետազոտության մեթոդիկան: Օգտագործելով առաջարկված բանաձեռ, կազմվել է սելավային հոսքերի ոխսկի գնահատման քարտեզ, որը հնարա-

* E-mail: pavtyan@ysu.am

վորություն է ստեղծում առանձնացնել դրանք ըստ ռիսկի ցուցանիշների և նախօրոք լուծել կամխատեսման հիմնախնդիրը:

Անհրաժեշտ է նախ որոշել երևոյթի ապահովածությունը: Այս նպատակով օգտագործվել է ՀՀ տարածքի սելավների դասակարգման սխեման [4], ինչպես նաև դաշտային ուսումնափրությունների արդյունքում ստացած տվյալները [5]:

Որպես ապահովածություն հիմք է ընդունվել սելավաբերությունը, սելավի տիպը, հաճախականությունը և վտանգավորությունը: Այս դեպքում բանաձևն ընդունում է հետևյալ տեսքը՝

$$R = P_x U,$$


որտեղ x -ը դասակարգման նշված պարամետրերի արժեքն է:

Ըստ սելավաբերության (պինդ փուլի առավելագույն ծավալը 1 կմ² ակտիվ մակերեսից, մեկ սելավի դեպքում հազ. կմ³/կմ²) Լոռու տարածքի սելավները բաժանվում են. ուժեղ՝ 15–35, միջին՝ 5–15, թույլ՝ <5; ըստ սելավի տիպի (զանգվածի խտությունը կգ/մ³)՝ 1500–1700, 1300–1500, 1100–1300; ըստ հաճախականության (ոչ պակաս մեկ սելավից)՝ ուժեղ՝ 1–3 տարի, միջին՝ 3–10 տարի, թույլ՝ 10-ից ավելի տարի; ըստ վտանգավորության՝ 1-ին կարգի, 2-րդ կարգի, 3-րդ կարգի:

Այսուհետև, սրանք, ուժեղից թույլ նվազող հաջորդականությամբ գնահատվել են 3, 2, 1 բալերով, և յուրաքանչյուր սելավային հոսքին համապատասխան պարամետրերի բալերի միջին թվաքանականի և սպասվող վնասի չափի արտադրյալով ստացվել են ռիսկի ցուցանիշներ:

Հասցված վնասի չափը գնահատելու համար օգտագործվել է արտակարգ իրավիճակների նախարարության վերջին 20 տարվա վնասների ցուցանիշներից, դասակարգվել ըստ վնասի չափերի (մլն. դրամ) և գնահատվել բալային արժեքներով՝ 3 բալ՝ 100-ից ավելի; 2 բալ՝ 1–100; 1 բալ՝ մինչև 1:

ARCMAP ծրագրի և ռիսկի տվյալների մուտքագրման միջոցով ստացվել է ռիսկի գնահատման քարտեզ (տես նկար):



Լոռու մարզի սելավային հոսքերի ռիսկի գնահատման քարտեզ:

Քարտեզի վերլուծությունը ցույց է տալիս, որ ռիսկի գնահատման բարձր ցուցանիշներ գրանցվել են Հայաստան (6,75), Լեռնոնտով (6,0), Սարառատ (5,5), Գողարան (5,5), Լուսադրյուր, Սարալանջ (5,0), Քարաձոր,

Արզուտ, Լեռնանցք (4,5) սելավային հոսքերում, որոնք պայմանավորված են այդ հոսքերի տնտեսական օբյեկտների նկատմամբ ունեցած դիրքով, նրանց տեղադիրքի լանդշաֆտային գոտիներով և աշխատանքում օգտագործված պարամետրերի գնահատումով:

Համեմատաբար ոխսի ցածր ցուցանիշներ գրանցվել են Գեղարքուն, Չիչկան, Վանաձոր, Լեռնավան, Անտառամուտ, Օձիձոր, Բաղում և այլ հոսքերում:

Եզրակացություն: Այսպիսով, վերոհիշյալ հետազոտությունը թույլ է տալիս ուսումնասիրվող տարածաշրջանի սելավային հոսքերը դասակարգել ըստ ոխսի գնահատման ցուցանիշների և մշակել դրանց դեմ պայքարի եղանակներ, որոնք աստիճանաբար մոտեցնում են այս ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդրի, այն է սելավների կանխատեսման հարցերի լուծմանը:

Ստացվել 05.12.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Географический энциклопедический словарь, 1988, 273 с.
2. **Գավթյան Պ.Գ.** Վայր–Զանգեզուրի սելավային երևոյթների ձևավորման ֆիզիկաաշխարհագրական պայմանները: Եր., 1996, էջ 101–132:
3. **Գագինյան Ռ.Խ.** Բնաշխարհագրական տեսություններ: Եր., 2010, էջ 121–123:
4. **Նազարյան Խ.Ե.** Լեռնային ռելիեֆը՝ որպես ֆիզիկաաշխարհագրական առաջնակարգ գործոն: Եր., 2006, էջ 38–41:
5. **Бойнагряն В.Р., Давтян П.Г. и др.** Оценка опасности и риска формирования селей в северных областях Армении. Материалы научной конф.: “Селевые потоки: катастрофы, риск, прогноз, защита”. М., 2012, с. 14–15.

П. Г. ДАВТЯН, Г. А. КОСТАНЯН

ОЦЕНКА РИСКА СЕЛЕВЫХ ПОТОКОВ ЛОРИЙСКОГО МАРЗА

Резюме

По формуле, предложенной ООН (с некоторыми изменениями), произведена оценка риска селевых явлений с использованием схемы классификации селевых потоков Лорийского марза, а также наносимого ими ущерба. Это является шагом к прогнозированию селевых потоков.

P. G. DAVTYAN, G. A. KOSTANYAN

RISK ASSESSMENT OF MUDFLOW PHENOMENA IN LORI REGION

Summary

The risk of mudflow phenomena, as well as damages caused in Lori region have been estimated by scheme of mudflow classification according to the formula proposed by the UN (with some modifications). This is a step to forecasting mudflows.